ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Բեռլին)
2020 թ. փետրվարի 22-24-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Բեռլինի 70-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում գործող Եվրոպական կինոշուկա

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Բեռլինի 70-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում գործող Եվրոպական կինոշուկային:

Փետրվարի 23-ին մասնակցել եմ Բեռլինի կինոփառատոնին կից եվրոպական կինոշուկային, որի շրջանակներում տեղի է ունեցել առաջին հայկական տաղավարի բացման արարողությունը՝ մասնակցությամբ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանի, նշյալ կինոշուկայի հիմնադիր տնօրենի, միջազգային կինոարտադրողների և Հայաստանից ժամանած կինոգործիչների:

Աննախադեպ այս նախաձեռնությամբ հայկական կինոարտադրողների ներկայությանը տրվեց նոր որակ և կարգավիճակ, հայ կինոարտադրողների համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ հաստատելու միջազգային գործընկերային հարաբերություններ:

Տեղի են ունեցել առանձին հանդիպումներ Գերմանիայից, Իսրայելից, Էստոնիայից, Բուլղարիայից և այլ երկրներից ժամանած կինոգործիչների, Եվրիմաժի անդամ-պատվիրակների հետ:

Քննարկվել են համատեղ կինոարտադրությունը խթանելու և հայկական կինոժառանգությունը տարածելու խնդիրները, մասնավորաբար՝ Իսրայելում հետհայացք կինոդիտումներ կազմակերպելու ծրագիրը:

Փետրվարի 24-ին իմ գլխավորությամբ պրոֆեսոր Մարտին Հագեմանի հրավերով հայկական պատվիրակության անդամների հետ այցելեցինք Պոտսդամի «Film university Babelsberg» համալսարան և ծանոթացանք կինոհամալսարանի կառուցվածքին և տեխնիկական հնարավորություններին:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ուսանողական փոխանակումներ կազմակերպելու համար:

26.02.2020

Արայիկ Խզմալյան